




Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ՊՈԼԻՍ ԵՎ ԻՐ ԴԵՐԸ*

Գ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈ ԱԹՈՈՐԸ

1. ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԲՆ ՈՒ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Կթեակոխներ արդեն կնճռատությանց նոր դաշտ մը. ի՞նչ իրավունքներ ունեցան հայոց պատրիարքները: Պոլսո Աթոռին հինգ դարերը պրպտել փորձողի մը համար՝ այս հարցումն է, որ հանկարծ կցցվի դեմը: Եվ առաջին իսկ պահեն հուսահատությունն է որ կհամակն զայն, որովհետև ոչ մեկ աղբյուր օգնության կհասնի իրեն:

Ինչպես հույները՝ հայերն ալ ոչինչ ունին, որպեսզի մեզ ճանչցներ առանձնաշնորհումները, զորս Ֆաթիհ սուլթան Մեհմեդ տվավ իրենց պատրիարքներուն:

Ընթերցողներս թող ինձի ներեն, եթե զիրենք կեցնեմ հոս պահ մը:

Պոլիս, իր շատ մը մեղքերուն հետ, ունեցավ աններելի մեղք մըն ալ, — հոգ չտարավ ինքզինք պատմության մեջ դիմացնելու: Արևիկ լուսնեցավ, ինչպես լուսնեցավ ձեռագրատուն և գրադարան, ու թանգարան մը, ուր դարերը իրենք զիրենք պատմեին, իսկ ինչ որ

ունեցավ՝ չկրցավ պահել: Գրքերու այն մթերանոցը, որ քանի մը տասնյակ տարի ինքզինքը քաշկոտեց «Ազգային մատենադարան» շողշողուն պիտակին ներքև, երբեմն իրեն շողշողուն ալ անուններ ունենալով իբրև վարիչ սկսյալ 1877-են, երբ պաշտոնապես մարմին առած էր ան, ծաղրանկար մըն էր միայն, ուր կուգային իրար գտնել գրքերու հեք թափթփուկները: Իսկ այն քանի մը հարյուր ձեռագրերը, զորս ան կպատսպարեիր իր քանի մը դարակներուն մեջ, հեզանք մըն էին Պոլսո նման գաղութի մը համար, որ կրնար ամենեն ճո՛խը ժողովել հայ ժողովուրդի հոգեկան գանձին ամենեն թանկագին նմուշներուն, իր ունեցած բյուր հնարավորությանց շնորհիվ:

Ճիշտ է, Պոլիսը շատ բան զոհ տվավ համբավավոր իր հրդեհներուն, որոնք մեկ կլափով թաղեր կլափեին հաճախ: Երեմիա Չելեպին 1615-են մինչև 1694 թվականներուն վաթսուներկու հրդեհ կհաշվե Պոլսո մեջ: Ինձիճլան իր օրով 1778-են մինչև 1795, քսանյոթը մեծ հրդեհ կհամարե: Այս հրդեհներեն շատերը հազարավոր տուններ մոխրացուցած են մեկ անգամեն, իրենց բոցերուն զոհ դարձնելով եկեղեցիներ ալ, իրենց թանկագին բոլոր իրերուն հետ մեկսեղ: Մեկ հրդեհեն ճո-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1962 թվականի № 8-ից ԺԲ-ից և 1963 թվականի № 8 Ա-ից, Բ-ից, Գ-ից և Դ-ից:

դոպրածը մյուսը կառնե՞ր կտանե՞ր: Ու հակառակ աղոր, դեռ շատ բան փրկված էր մինչև անցյալ դարուն սկիզբը, բայց հրդեհը շինարարաց այդ բեկորներուն ալ: Ավետիս Պերպերյան իր «Պատմութեան» հառաջաբանին մեջ կըսէ, թէ շատ բան քաղած է Պատրիարքարանի դիվանէն, ուր «արձանագրեալ էին նամակք, դիւիտք, և ժողովք, և ստորագրութիւնք եկեղեցականաց և աշխարհականաց. ափսոս, զի այս գեղեցիկ դիւանն ապրեցաւ ի հրդեհին շոճա փաշայի»²⁵⁹ յաւուրս Կարապետ պատրիարքի ընդ Մայր Եկեղեցւոյն և Պատրիարքարանին և ձեռագիր մատենից, յորս էր և այն հազուագիւտ Կանոնագիրքն գրեալ ի մագաղթի ի Տարսոն քաղաքի Կիլիկիոյ ի թուին Հայոց Ոճէ (647=1198)»:

Մեղըը չլլինք միայն հրդեհներուն վզին: Անոնք ևս շատ բան խլած տարած են անշուշտ: Բայց ի՞նչ ըսենք այն գոհարներուն, զորս չքացուց մեր անհոգութիւնը, զորս կորսնցուցինք, զորս գողցուցինք: Քանի՞ն մեզ հասաւ Կոլոտի և նալյանի գրքերն, և ի՞նչ մնաց մեզի Պաղտատար դպրի, Դևորգ Փեշտիմալճյանի, Տերոյեցի և այնքան ուրիշներու հավաքածներն, մարդոց, որոնք ապրե՞ր ու մեռե՞ր էին գրքերու ծոցը: Ո՛ւր գացին Անտոնյան միաբանութեան մոտ պահված զմայլելի գրագրերը: Գողցվեցաւ անոնց մեծ մասը և գնաց զարդարել Եվրոպայի կամ Ամերիկայի հավաքածոները: Ի՞նչ եղան զինադարարն հետո մեր իսկ հավաքածները: Առևանգված են նաև անոնցմէ շատերը:

Հալաթիո Ազգային մատենադարանի հայերեն ձեռագիրներուն ցուցակը, զոր Բաբգեն վարդապետ պատրաստե՞ր էր վաթսուն տարի առաջ և որ վերջերս միայն լույս տեսաւ, 283 կտոր գրագրերու ցանկ մըն է լոկ, ողբալի թիւ մը, ուրկէ չենք գիտեր քանին կմնան դեռ ողջ: Եվ երևակայել, որ այդ գրագրերը Կոլոտի օրերին սկսած են հավաքվիլ մեզ հասնելու համար ճղճիմ այդ թվով: Բաբգեն, Կոլոտի նվիրած իր հատորին մեջ, հաստատել է հետո, թէ ճոխ էր Կոլոտի գրագրերու հավաքածոն, կավեցնէ, թէ «գծախտաբար այս ձեռագրի մեկ ստվերին առջև կգտնուվինք հիմա»:

Ու դեռ ինչե՞ր կային մասնավորներու մոտ, գրագիր թէ վավերագիր: Եթէ դատարկ էր մնացե՞ր ազգային Պատրիարքարանի արխիվը, ֆերմաններ կվխտային անհատներու քով:

Այս տողերը ինձի տուն տվին հուսահատութեան սա քանի մը պահերը, որոնք ուղեղս կլլեն հիմա, երբ ան կփորձեմ, խեղճը, շփոթութեանց ցանցն ճողդալիլ: Ո՛ր հիշա-

տակութեան կդիմես՝ փխրուն դուրս կուգա, ո՛ր գիրքը կթղթատես՝ քեզ կշվարեցնէ, ո՛ր աղբյուրին կդիմես՝ ցամքած է: Զի՞ ճմլվիր սիրտդ, երբ մուրացկանի նման դռն դուրս կթափառես, և առջևդ գոց կգտնես բոլոր դռները: Պոսեն բան մը մնացած է, որպէսզի գրես իր պատմութիւնը: Թալլած են զայն հայն ու օտարը, ու մարդ չի գիտեր, թէ ո՛ր երթա փնտռել հափշտակված նյութերը: Զիշտ երեկ, աղբյուրներ մուրացած տուն, գիրք մը ինկալ ձեռքս: Խորագիրը հրապուրեց զիս, և հուսացի քանի մը նյութ ձանկել մեջն: Դուք իմ տեղս կաթվածաճար կըլլայիք կարդալով Քրանսական կաճառի անդամներն մեկուն՝ արքա Սենիի երկու դար առաջ Պոսեն գրած մեկ նամակը, ուր կհիշեմ, թէ ի՞նչպէս ձեռք անցուց հունարեն և ուրիշ լեզուներով անթիվ գլուխ-գործոցներ, և կիմացնեմ այս առթիւ, թէ Պոսեն առած կտանի քառասուն հայ ձեռագրեր ալ, որոնցմէ մեկը, կըսեմ, հաղթանդամ մարդ մը չի կրնար միակը վերցնել գետնէն²⁶⁰:

Փակագիրը այստեղ փակենք և երթանք դարձյալ խավարին մեջ խարխափիլ:

Ի՞նչ էր Պոլտո հայ պատրիարքին օրինական դիրքը հաշս պետութեան: Այս հարցն է, որ մեզ կհետաքրքրէ այս պահուս, և սակայն ժամանակակից որևէ աղբյուր մեզ կպակսի այդ մասին, և ստիպված ենք ենթադրութեանց անձնատուր ըլլալ առավելապէս:

Միակ կովանը, որ ենթադրութեանց ճամբան կըսան մեզի՝ հետագա շրջաններ մեզ մնացած ֆերմաններն են:

Սուլթաններու շրջանին սովորութիւն կարարդարեւ ամեն մեկ նոր սուլթանի հետ նորոգել հին առանձնաշնորհումները: Եվ հաճախ ի նորոտրված ֆերմաններուն մեջ բառ առ բառ կկրկնվին նախապէս շնորհված իրավունքները: Այս կերպով է, որ պահպանված են որոշ հետքեր հին իրավունքներու մասին, որոնց փաստաթուղթը տարիները չեն հասցուցած մեզ և որոնք հիշատակված են սուլթանի սուլթան:

Ամենահին «բերաթ»-ը, որ մեզ հասած է և որ կճշտեմ, մանրամասն, հայոց պատրիարքին պարտականութիւններն ու իրավասութիւնները, ԺԼ դարու կեսերին հետո միայն²⁶¹, սուլթան Մուստաֆա Գ-ի կողմէ 1764 հունիս 3-ին Պասմաճյան Գրիգոր պատրիարքին շնորհված «բերաթ»-ն է: Ան հավանաբար իր գլխավոր գիծերուն մեջ շատ չի տարբերի զայն նախորդող պատրիարքներուն տըր-

²⁶⁰ „Lettres sur Constantinople de M. l'abbé Sévin., Paris, 1802, p. 22.

²⁶¹ Ա. Պերպերյան, «Պատմութեան հայոց», Կ. Պոլս, 1871, էջ 227—233:

վածին, և հետևաբար կրնա ընդհանուր պատկերը մեզ տալ իրավական այն դիրքին, որով օժտված էր Կոստանդնուպոլսո ճայոց Պատրիարքարանը սուլթաններու տիրապետության տակ:

Գրիգոր պատրիարք Պատմաճյանի տրված սուլթանական այս «բերաթ»-ը, որ 1177 զիլ-հիջը 3 (1764 հունիս 3) թվականը կերե, կհայտնե նախ, թե շահրե Նալլան պատրիարք առողջական պատճառներով հրաժարած ըլլալով, հայերը անոր տեղ ընտրած են Գրիգորը իբրև պատրիարք: Հետո երկարորեն կթվե իրավունքները, զորս պիտի վայելն ան իր պաշտոնավարության ընթացքին, շնորհալով նախ հիշել, որ նորընտիր պատրիարքը, պաշտոնի անցած ատեն, 100 000 աֆշն պիտի վճարե արքունական գանձին իբրև փեշքեշ, և հետո, ամեն տարի 100 000 աֆշն իբրև մուֆաթա: Անցնելով նոր պատրիարքին իրավունքներուն, «բերաթ»-ը կըսե, թե Գրիգոր պատրիարքն է Կոստանդնուպոլսո, ինչպես և Ռումելիի և Անադոլուի փեռաֆենդեին և անոնց ենթակա վայրերու հայերուն, և բոլոր այդ շրջաններու առաջնորդները (մեքիասա), քահանաները (փափազ) և առհասարակ բոլոր հայերը իրենց հոգևոր գործերուն առթիվ պետք է անոր դիմեն և անոր խոսքեն դուրս չելլեն: Ոչ ոք արգելք պետք չէ հանդիսանա, երբոր պատրիարքը իր պատրիարքության ենթակա շրջաններուն մեջ առաջնորդ (մեքիասա), վարդապետ (ֆառաբաշ) և քահանա (փափազ) ընտրե կամ հրաժարեցն: Առանց պատրիարքի կնքյալ գրության, որեւէ մեկը չկողմի առաջնորդական պաշտոնին: Վաթրֆներու վերաբերյալ խընդիրները պատրիարքի իրավասության կպատկանին, և բեյրուվալի ու ֆասսամի պաշտոնյաները պետք չէ որ հին սովորությունը ոտնակոխ ընելով միջամուխ ըլլան երբ առաջնորդները, վարդապետները, քահանաները կամ մարապետները պատրիարքին պատկանող մեքրուֆիաքը հավաքեն: Որեւէ միջամտություն չըլլա, երբ հայերը ծիսակատարություն կատարեն հինն և ի վեր իրենց սեփականության տակ գտնվող եկեղեցիներուն, վանքերուն և ուխտատեղիներուն մեջ, ինչպես նաև արգելք չհարուցվի ասոնց նորոգությանը: Որեւէ քահանա պսակ չկատարե առանց պատրիարքի արտոնության և հակառակ իրենց ծեսի պահանջներուն: Երբ հայ կին մը ամուսինին քովն փախի, կամ այլ մը ուզե իր կինը թողուլ և կամ կին առնել պատրիարքեն և իր ներկայացուցիչներեն զատ որեւէ մեկը չմիջամտե: Մեռնող հայ առաջնորդները կամ քահանաները և կամ որեւէ հայ, եթե իրենց ծեսին համաձայն կտակ ընեն եկեղեցիներուն, աղքատներուն և կամ

պատրիարքին՝ օրինական թող սեպվի: Որեւէ մեկը թող չմիջամտե, եթե պատրիարքը իրենց ծեսին կանոններուն անսաստող առաջնորդները կամ քահանաները պատժե, անոնց մաղերը խուղե, զանոնք պաշտոնանկ ընե և անոնց եկեղեցիները ուրիշներուն տա: Պատրիարքը տեղ ըլլա եկեղեցիներու պատկանող այգիներուն, պարտեղներուն, ագարակներուն, մարգագետիններուն, արտերուն, ջաղացքներուն, շենքերուն, փանայիքներուն, վանքերուն, խանութներուն, պողատու ծառերուն, կարասիներուն և արջատներուն: Պատրիարքը իրավասություն ունենա պատշաճ տնօրինելու այն հայերուն նկատմամբ, որոնք առանց եկեղեցի և վանք ունենալու, թաղե թաղ ման կուգան և հակառակ իրենց ծեսին, կզրդեն մարադատ հայ աշխարհը: Երբ կճամբորդե պատրիարքը, իշխանությունները չկարենան միջամտել անոր հետ ձեռքներուն, անոր բարապաններուն (յասաֆչի), հետի մարդոցը, ինչպես նաև անոր տարագին և հանդերձանքին: Պատրիարքին սնունդին հատկացված այգիներու բերքը կամ հաստացյալներու կողմն իբրև նպաստ (ռեսստորբ) ընծայված չիլան, յուղը, մեղրը և ուրիշ նյութեր երբ կփոխադրվին անոր բնակարանը, արգելք չհարուցվի նավամատուցներին կամ դռներին անցած ատեն: Որեւէ քրիստոնյա (=հայ) մուսուլման դառնալու շտապարտովի առանց իր կամքին: Տարեկան 140 000 աքչի գումարը հատուցվել հետո, պատրիարքը չպարտադրվի ուրիշ գումար ևս վճարելու: Հայ քահանաները չպարտադրվին թաղման կարգ կատարելու, երբ կրոնքին պայմաններուն հակառակ ամուսնացող մը մեռնի: Պատրիարքը, իր քափուքահյան, և իր հետևորդներին 15 անձ գերծ ըլլան ճիզիյեի, ավաբիզի և թեֆչալիֆի տուրքերին: Քահանաներուն և վարդապետներուն հաշիվներու բնությունը պատրիարքին և իր ներկայացուցիչներուն ձեռքով միայն կատարվի: Որեւէ փաշա, մյուրեսելիմ, վոյվոդա կամ ուրիշ որեւէ իշխանավոր չկարենա իսկական հայ աշխարհներուն ձեռքեն առնել անոնց ունեցած եկեղեցիներն ու վանքերը և զանոնք տալ ուրիշ դավանանքի պատկանող ու կաթոլիկ կողմած խոտվարարներուն (մուֆսիդ): Օտար դավանանքի պատկանող և կաթոլիկ ըլլալու մեղքով (ռոմմեթ) մեղադրված սուլն խոտվարարներու հանցանքին համար նեղություն չպատճառվի իսկական հայ աշխարհներուն: Հայոց պատրիարքին միջոցով և անոր ղեկուգացողով դավանանքի պահանջմանց սահմանին մեջ տնօրինվի անոնց մասին հարկ եղածը: Այդ կարգի խոտվարարներու մասին սահմանված տուգանքն զոյացող պարտքերու համար ոտնձգություն չըլլա քա-

դաքններու և գլուղներու մեջ գտնվող եկեղեցիներու և վանքերու գույքերուն: Թուլլատրու-թյուն չորսի այն հայերուն, որոնք, հակառակ իրենց վաղեմի ծեսին, կամուսնալուծվին և կամ երկրորդ կին մը կառնեն, և պատժվին այդպիսիներու: Միջամտութիւն չըլլա պատրիարքի ձեռքի ասային: Պետական մու-ֆաթաւն հավաքելու համար ման եկող վարդապետներուն ինչքերուն և կենդանիներուն ոտնձգութիւն չըլլա իշխանութեանց կողմէ: Եկեղեցիներու հատուկ գույքերն մաքսատուրք (գլամուլ) և անցատուրք (բաք) չգանձվի: Շերիի հետ առնչութիւն ունեցող անոնց դատերը հղվին ուղղակի կայսերական մեր դիվանին (Դիվանը հյումայումէ):

«Բերաթ»-ը, զոր թարգմանաբար համառոտեցինք, գաղափար մը կրնա տալ իրավունքներուն մասին Կոստանդնուպոլսո Աթոռին վրա նստող պատրիարքներուն: Իրավունքները, որոնք ճշտված են ԺԼ դարու այս հրովարտակին մեջ, հավանաբար հարեւման են նախկին տարիներու մեջ հայոց պատրիարքներուն շնորհված իրավասութեանց, եթէ նույնիսկ տարբերին ինչ-ինչ մանրամասնութեանց մեջ: Նույն այս իրավունքները հետագային ալ տրված են հայ պատրիարքներուն, ինչպես կերևա ուրիշ թերթերէ-ն մը, որ 1831 հոկտեմբեր 4/16 թվականին տրված է Ստեփանոս պատրիարքին սուլթան Մահմուդի կողմէ²⁶²:

Թե հայ պատրիարքներու տրված թերթերէ-ններուն մեջ կնախատեսվեն տուրքերը, զորս անոնք իրավունք ունենին պահանջելու իրենց հոտեն, այդ մասին վկայութիւն կա արքայական ֆերմանի մը մեջ, զոր Մուրադ Դ տված է 1631 հունվար 2/12-ին Զաքարիա պատրիարքին դեմ հայ համայնքին կողմէ տրված բողոքի մը առթիւ: Այդ ֆերմանը, զոր թուրք ծանոթ պատմագետ Ահմեդ Ռեֆիք կհրապարակե, պետական արխիւ-ներեն քաղելով երբեմնի «Ստամբուլի կյանք»-ին նվիրված վավերագրերու իր ժողովածուներուն մեջ, մեկն է ամենահին թուրք վավերագրութեան, որոնք հայոց կվերաբերին, կթարգմանենք նույնութեամբ:

«Ստամբուլի դատավորին կհրամայվի որ՝ Ստամբուլի հայ համայնքը հոտս գահոյից խնդրանք ներկայացնելով հայտնեց, թէ իրենք կպատկանին մեր նախահոր սուլթան Մեհմեդի վաքըֆին և [Ստամբուլի] կայսերական գրավումեն մինչև այսօր, այն օրերը, երբ կհավաքվին եկեղեցիներու մեջ ըստ իրենց սնոտի (բաթուլ) ծեսին, ամեն մեկը իր կարողութեան համաձայն դրամ մը կձգէ

պնակի մը մեջ, և այդ դրամը հավաքելով հնուց ի վեր կօգնեն իրենց մեջեն անկարեն-րու և գործելու անկարողներու:

Եվ սակայն իրենց ներկա պատրիարքը Զաքարիա, իր շուրջի հոգևորականներն Ավետոսի (հավանաբար Ավետիս), Գրիգորի, Ասֆադիայի (հավանաբար Աստվածատուր) և Սարգիսի թելադրութեամբ, սկսած է, բացի այն տուրքերին, որոնք նախատեսված են հիշյալ պատրիարքի թերթերէ-ն մեջ, գումար վերցնել հիշյալ դրամեն, և եկեղեցիներու պատկանող պարտեզներն պտղատուրք (մեյվե ակչեսի) պահանջել, և այս կերպով վշտացնել և խրտչեցնել [Ժողովուրդը]:

Այս բոլորը հայտնելով, կաշխատեին, որ արքայական հրամանով մը արգիլեմ այդ բանը:

Կհրամայեմ հետևաբար, որ ներկայս ստանալուդ ուշադիր ըլլաս և եթէ ստուգես, որ ասոնք խկապես հիշյալ վաքըֆին ռայաներն են և ցարդ տեղի ունեցած է վերը հիշվածին պես, իսկ հիմա պատրիարքը, հակառակ ցարդ կիրարկվածին, կմիջամտե վերը բացատրված ձևով, կվշտացնե, կխրտչեցնե և կճնշե, թույլ չտաս, որ ասկե հետո միջամտութիւն (տախլ) և ոտնձգութիւն (քեար-րուզ) տեղի ունենա ի հեճուկս ցարդ գործադրվածին, նվիրական օրենքին (շերի շերիֆ) և արքայական հրամանին, արգիլես և վերջ տաս, և թույլ չտաս, որ հիշյալ պատրիարքը, իր թերթերէ-ն մեջ նշանակվածն և ճշտվածն ավելի որեւէ բան պահանջե, ճնշե և ոտնձգութիւն կատարե:

1040 շեմազուլախեր 8 (1631 հունվար 2/12)»:

* * *

Հերթական հարցը, որ մեզ կզբաղեցնե, նույնքան շփոթ կներկայանա մեզ:

Ինչպե՞ս կանվանեին պատրիարքները:

Հայ Եկեղեցին գովաբանած ատեն, սովորութիւն ըրած ենք պարծենալ, թէ ժողովրդապետական ոգին է հիմնական խարխալ անոր գործունեության, թէ ժողովուրդին կամքովն է, որ հայ հոգևորականները Հայ Եկեղեցին վարելու կուզան, թէ զանգվածներու հսկողութեան տակ է, որ կգործեն հայ հոգևորականները նվիրապետական բոլոր աստիճաններուն վրա:

Եվ արդարեւ, Հայ Եկեղեցին սկիզբն ի վեր ժողովուրդին է առեր իր ուժը, և այդ ուժին է կռթներ բոլոր փորձութիւններուն, բոլոր աղետներուն պահուն: Ու փոխարեն՝ հայ ժողովուրդն ալ իր Եկեղեցվո հովանիին տակ ապաստան է գտեր իր դժնդակ օրերուն, և անոր յեց՝ փորձած է տոկալ, դիմանալ:

²⁶² Ա. Պետրեյան, հիշված աշխատութիւնը, էջ 222—227:

Օրմանյան, Հայ Եկեղեցին բնորոշելու ատեն, դանց շրներ անոր արժանիքներուն մեջ թմել նաև Հայ Եկեղեցւոյ այդ գիծը²⁶³:

Ժողովրդապետական այդ ոգին միշտ չէ որ, սակայն, իր արտահայտութիւնը դառն է Հայ Եկեղեցւոյ կյանքին մեջ: Հայ Եկեղեցւոյ պատմութիւնը որքան դրվագներ մեզ կուտա, երբ հայ ժողովուրդը արհամարհված է եղեր լրիվ, նույնիսկ Հայ Եկեղեցւոյ ամենն բախտորոշ օրերուն:

Պոլսոյ Պատրիարքական Աթոռը, իր պատմութեան մեջ, սե էջեր ինքն ալ ունի: Պատրիարքներու ստվար մասը զգեցած է իր կապան դավերու շնորհիւ, անգիտանալով դանդաղած ու անոր տրամադրութիւնները և ուրիշ կովան շունենալով, բայց եթէ սուլթանին բարեհաճութիւնը, որուն կտիրացվեր գրեթէ միշտ խտտոր ճամբաներով:

Ինչպիսի տեսանք, Ֆաթիհ սուլթանին կամքն էր, որ իր Աթոռին վրա նստեցուց հայոց առաջին պատրիարք Հովակիմը: Ոչ հայ ժողովուրդի կամքը, ոչ ալ ցանկութիւնը դեր ունեցան հոգ: Եթէ հույն կղերին ցանկութիւնն ալ կար Գեննատիոս պատրիարքի անվանման մեջ, հայ կղերը նման հնարավորութենէն դուրս էր, որովհետեւ կղերական դաս դէռ հայր շուներ օսմանյան նոր մայրաքաղաքին մեջ, երբ պաշտոնի կանցներ Հովակիմ:

Ստույգ տվյալներ չունենք, գիտնալու համար, թէ զանգվածները ինչպիսի կարտահայտեան իրենց կամքը պատրիարքներուն ընտրութեան ատեն, Աթոռին ստեղծման հաջորդող շրջաններուն մեջ: Գիտենք միայն, որ սուլթանին կամքն էր, որ Աթոռ նստեցուց Հովակիմի անմիջական հաջորդները:

«Կ. Պոլսոյ Հովակիմ պատրիարքին մահվանն ետև՝ Մուհամեդ սուլթան նախ Սերասախան Տեր Մատթեոսը բերավ պատրիարքութեան համար, երբ սա հրաժարեցաւ՝ Տրապիզոնէն Արրահամ վարդապետի եկաւ, երբ ալ հրաժարեցաւ... Գաղատիայէն Նիկողոս առքեպիսկոպոսը բերավ և պատրիարք կառեց»²⁶⁴:

Գաւմբարյան իր տեղեկութիւնը կրող հավանաբար Ամիրդովլաթ Ամասիացի բժշկապետին համար 1480-ին ընդօրինակված համարավոր Սաղմոսարանի հիշատակարանն է, ուր գրիւր Մարտիրոս կրտսէ, թէ 1479-ին զինք Գարամանն «սուրկուն» բերին Պոլիս, ուր մնաց ճառ ոտս սուրբ վարդապետին մերոյ տէր Մաթէոսի Սերաստացոյ և Աբրահամ վարդապետի Տրապիզոնեցոյ, որ և զսո-

րայ ալ խոնդբարն բերել էր վասն պատրիարքութեան համար, և սորա ոչ առին յանձն լաւ համարելով զմիայնակեցութիւն, քան թէ փառք առնուլ ի մարդկանէ»²⁶⁵:

Զգիտենք մինչև երբ տեկց այս դրութիւնը:

Կերեի, թէ սուլթանները տակաւ սկսան հաշիւի առնել նաև հայ համայնքի ցանկութիւնները, իսկ հայ համայնք ըսելով պետք էր հասկնալ այն վեց հասարակութիւնները (Ալթը ջեմաաթ), որոնք մարմին էին առեր Պոլսոյ մեջ Ֆաթիհի իսկ օրին և որոնք հավանաբար ունեին նաև իրենց եկեղեցիները իրենց հոգեւոր դասով:

Մինչև ժ՛հ դարու վերջերը և անկէ հետո ալ «վեց ջեմաաթ»-ները Պոլսոյ հայ համայնքը կենդանացնէին հայս պետութեան, և նաև հայս հայ համայնքին: Պատմաճշան պատրիարք երբ իր հրաժարականը ներկայացնէ իւր համար 1772 փետրվար 22-ին ժողով կհրավիրէ Մայր Եկեղեցւոյ մեջ, հոն կհավաքվին «վեց ճէօմահաթ», քահանայք և իշխանք, և ի բոլոր էսնաֆից ծերունիք և ի խօսից տեարք, անլի քան զհաղար»²⁶⁶:

Պատրիարքները ձևականորեն պետք է Աթոռ դալին «Ալթը-ջեմաաթ»-ներու կամքով: Այսպիսի էր դոնէ թուրք իշխանութեանց պահանջը նոր պատրիարքը հաստատելու համար իր Աթոռին վրա:

Հայոց պատրիարքները պաշտոնի չէին կրնար անցնիլ սակայն առանց Բարձրագույն դռան զրավոր հաճութեան: «Բերաթ»-ը, որով կտրվէր այդ հաճութիւնը, կշնորհվէր հանուն սուլթանին, սուլթանական թուղրան կրելով ճակատը:

Սովորութիւնն էր, որ պատրիարքին շնորհված սուլթանական «բերաթ»-ին մեջ նախ ակնարկութիւն ըլլար, թէ նոր պատրիարքը ինչ պայմաններու մեջ կուգար Աթոռ:

Ան «բերաթ»-ին մեջ, զոր քիչ վերը հիշեցինք և որով 1764-ին սուլթան Մուսթաֆա Գ Գրիգոր Պատմաճշան պատրիարքին ընտրութիւնը կհաստատե, կրտսէ, թէ Կոստանդնուպոլսոյ և Ենթակա շրջաններու հայոց պատրիարքը Հակոբ Նալբան, որ 24 տարի ի վեր կվարէր պատրիարքութիւնը կայսերական հրովարտակի մը հիման վրա, հաստատամտութեան և ուղղամտութեան կատարյալ պայմաններու մեջ, կայսերական գիվանին ուղղված գրութեամբ մը կհայտնէ, որ իր հիվանդութեան պատճառով այլևս ի վիճակի չէ

263 Դոկտ. Վ. Թորգոմյան, «Հանդես ամսօրյա», 1895, էջ 247:

266 Բարգին ծայրագույն վարդապետ Կյուլեսերյան, «Հիշատակարան Պատմաճշան Գրիգոր պատրիարքի», էջ 95:

263 Օրմանյան, «Հայոց եկեղեցին», Կ. Պոլիս, 1911, էջ 181 և 185:

264 Հ. Գ. Գալմբարյան, «Հանդես ամսօրյա», 1911, էջ 478:



պատրիարքությունը վարել և որ կուզե իր պաշտոնը փոխանցել իր իսկ ձեռնասուններին և իր անթերի վարքուբարքով ծանոթ նրուաղեմի պատրիարքական փոխանորդ Գրիգոր վարդապետին:

«Արդ, — կալեցնե՞ս «բերաթ»-ը, — վեցյակ հասարակությունը (Ալթը ջեմաթ) կոչված հայ ռայայությունը վարդապետներն ու քահանաները (ռաճիպ վե փափազ), հասարակության ղեկավարները (միլլեթ բաշը) և տուններին տեղերին ծանոթ էսնաֆներու ծերերը (էսնաֆ իխթիյարլերի) միահամուռ համար դատած ըլլալով հիշյալ պատրիարքական պաշտոնին համար, հաճութուն կտորվի տեղի ունեցած փոխանցման», և այլն²⁶⁷:

Ստեփանոս պատրիարքի պաշտոնը հաստատող «բերաթ»-ին մեջ ևս կանարկվի ընտրության պարագաներուն, բայց շատ ավելի անորոշ ձևով մը: Հիշյալ «բերաթ»-ը կրնե, թե հայոց Կարապետ պատրիարքը հիվանդության պատճառով հրաժարած ըլլալով, հրամայվեցավ ուրիշ մը ընտրել տեղը և հետևաբար «հայոց ազգին անհրաժեշտ սեպվող անձները» (եւմենի միլլեթդեն լազըմ գեւնելեր) Պատրիարքարան հավաքվելով ընտրած են Ստեփանոսը²⁶⁸:

Բայց վեց ջեմաթներու կամքը իրականին մեջ հարցնող չկար: Բարձրագույն դուռն ցանկությունն էր որ կտնօրինե՞ր հաճախ ամեն բան: Եվ այդ ցանկության մեջ կխաղար առավելապես օրվան փաշային անձնական շահագրգռությունը:

Եվ ամեն փաշայի կռնակը հայ ամիրա մը կար, որ իր կամքը կշռնշար անոր ականջին, իսկ ամեն ամիրա իր նախընտրած եպիսկոպոսը ունեւր:

Եվ եթե ասոր վրա ավելցնեք ամոթալի կռիվները, զորս Պատրիարքական գահուն թեկնածուները կմղեին Աթոռը իրարու ձեռք հափշտակելու համար՝ պատկերը կըլլա ավելի լրիվ:

Պետք է մոտենանք անցյալ դարու կեսերուն, որպեսզի զանգվածներու ձայն ալ գրտնենք պատրիարքներու ընտրության մեջ: Եվ այդ՝ առանց պայքարելու չեղավ: Բայց արդեն տարբեր նյութ է այդ:

* * *

Սկզբնական շրջանին «պատրիարք» բառը չեն գործածած հայերը՝ Պոլսո իրենց հոգևոր պետին համար, տիտղոս, զոր կկրեին Օրթոդոքս Եկեղեցվո հոգևոր պետերը Պոլսո մեջ ինչպես Ֆաթիհն առաջ, նույնպես և Ֆաթի-

հեն հետո, և զոր կրած էին ու շարունակեցին կրել մյուս հոգևոր պետերը ևս Անտիոքի, Աղեքսանդրիո և Նրուսաղեմի մեջ: Պոլսո մասին հայ աղբյուրներու մեջ «պատրիարք» բառին չենք հանդիպիր գրեթե ամբողջ դար մը: Զեռագիրներու հիշատակարաններուն մեջ առհասարակ «հայրապետություն» ըսված է պատրիարքության պաշտոնին համար:

Այսպես, Պոլսո առաջին հայ պատրիարքին համար «ի հայրապետութեան Տէր Յովակիմայ արքեպիսկոպոսին» կգրե Ամիրդովլաթի «Ռեամկական գիրք»-ի հիշատակարանը 1474-ին²⁶⁹:

Ամիրդովլաթի «Անգիտաց Դեսպետ»-ի հիշատակարանին մեջ ևս, 1474-ին, «ի հայրապետութեան ի մայրաքաղաքն ի Կոստանդնուպոլիս Տէր Նիկալայոսին» ըսված է Հովակիմի հաջորդին համար:

«Ի հայրապետութեան Տէր Կարապետին քաղաքին Կոստանդնուպոլիս» կըսե նույնպես Պալաթի եկեղեցին պահված Սկեռայի Ավետարանին հիշատակարանը, ականարկելով Նիկողոսի հաջորդին²⁷⁰:

Առաջին անգամ պատրիարք բառին կհանդիպինք դար մը հետո միայն: Մաղաքիա դպիր, արձանագրելով Աբգար Եվդոկիացիի փորձերը Պոլսո մեջ տպարան հաստատելու համար, կհիշե, որ Պոլսո մեջ տպագրված առաջին հայ գիրքը, «Փոքր քերականություն»-ը, լույս տեսավ 1567-ին, «ի շորրորդ ամի պատրիարքութեան Յակոբ րաբունապետի Կոստանդնուպոլսոյ»²⁷¹:

Դժբախտաբար հայոց վերաբերյալ թրքական հին վավերաթուղթեր չեն հասած մեզի, որպեսզի գիտնայինք, թե պաշտոնապես ե՞րբ է սկսած «փաթրիք» (պատրիարք) կոչվիլ Պոլսո հայոց հոգևոր պետը: Ամենահին վավերագիրը, ուր «փաթրիք» բառին հիշատակությունը կգտնենք, 1631 թվականն է միայն: Կանարկենք այն ֆերմանին, զոր Մուրադ Դ ուղղեց Կոստանդնուպոլսո դատավորին՝ հայոց «Ջաքարիա փաթրիքին ապօրեն գանձումներուն» մասին, և զոր տեսանք ավելի վերև:

2. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈ ԱԹՈՒՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՎՈՆՎԻՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Պոլսո մեջ հայ Պատրիարքության հաստատման պահուն և անկե հետո ալ դեռ շատ երկար ատեն ճշտված չէր անշուշտ Պոլսո հայ պատրիարքին դիրքը Հայ Եկեղեցվո նվի-

269 «Երկրագունդ», 1884, էջ 551:

270 Հ. Հ. Տաշյան, «Մայր ցուցակ...», էջ 189:

271 Հ. Գ. Զարեհնալյան, «Պատմություն հայ տպագրութեան», Վենետիկ, 1895, էջ 47:

267 Ա. Պեղաբեյլյան, «Պատմություն հայոց», էջ 228:

268 Անդ, էջ 222:

րուպետության մեջ: Եվ այդ շատ բնական էր: Պոլսո հայ Պատրիարքությունը մարմին կառնար նախ հայ ժողովուրդի կամքին անկախ, և Հայ Եկեղեցվո ազդեցության սահմաններին դուրս: Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը հաղիվ երկու տասնյակ տարիների վեր փոխադրված էջմիածին, ի վիճակի չէր օսմանյան կայսրության սահմաններին ներս տարածելու իր հոգևոր հեղինակությունը: Իսկ Սիսը, որ կշարունակեր դեռ կաթողիկոսական հավակնությանց ցանց մը պահել, մինչև Պոլիս չէր կրնար հասցնել այդ հավակնությունները: Այնպես որ Պոլսո մեջ հայ Պատրիարքությունը կստեղծվեր Հայ Եկեղեցվո պիտակը վրան, բայց անոր շրջագծեն դուրս: Բնականոն չէր անշուշտ երևույթը, և այդպես ալ պետք էր ըլլալ, որովհետև ան ի հայտ կուգար ոչ բնականոն պայմաններու մեջ:

Օրմանյան ընդհանուր բառերով միայն կուրվագծեն անբնականոն այդ կացությունը: Ան կգրեն պարզապես, թե Պոլսո առաջին հայ պատրիարքին՝ «Հովակիմի ստացածը նոր պաշտոն չէր, զի արդեն Արևելյան Փոքր Ասիո և Հարավային Եվրոպիո օսմանյան գավառներու առաջնորդն էր, և ինչ որ Ֆաթիհ հաստանար քրիստոնյաներու համար կազմակերպված նոր կացության գործադրությունն էր: Միայն առավելությունը, զոր հայեր կստանային, պատրիարք անունով պատվված և պատրիարքի իրավունքներով ճոխացած պետ մը ունենալն էր: Սակայն դրված պատրիարքությունը լոկ արտաքին պատիվ և իրավունք էր, եկեղեցական նվիրապետության տեսակետով Պատրիարքական Աթոռ մը հաստատել վեհապետական կարողութենին վեր էր, և բարձրագույն եկեղեցական իշխանությունն մը այդպիսի իրավասություն կամ աստիճան հաստատված չէր: Վասնզի ոչ Սիսի և ոչ էջմիածնի Աթոռները, որչափ որ գիտենք, Կոստանդնուպոլսով զբաղած չեն»²⁷²:

Այս շփոթ կացության մեջ, անորոշ կմնար բնականաբար Պոլսո պատրիարքին իրավասության շրջանակը ևս: Տրամաբանական է մտածել, որ այդ իրավասությունը ընդգրկեր օսմանյան բովանդակ հողը այն օրերու իր սահմաններուն մեջ, և ընդլայններ՝ քանի կլայննային պետության սահմանները:

Պոլսո Պատրիարքությունը առաջին իսկ օրեն հոգեպես կապված կգտնենք սակայն էջմիածնա Մայր Աթոռին: Պոլսո գաղութներն հետո զրված ամենահին հայ ձեռագիրներեն երկուրը՝ Ամիրդովլաթի «Դիրք ռամկօրէն»-ը և «Անգիտաց անպէտ»-ը, 1474-ին և 1478-ին էջմիածնի Սարգիս կաթողիկոսն է որ կհիշեն իբրև ամենայն հայոց հայրապետ:

Էջմիածնի հեղինակությունը հետզհետե ամրապնդվեցավ, մինչ Կիլիկիո Կաթողիկոսությունը կկծկտեր Միջերկրականի ափերուն վրա, իսկ Աղթամարինը ազդեցության դուրս շրջանակ մը միայն կպահեր: Այդ ժամանակ Ամենայն Հայոց Կաթողիկոսին հոգևոր իրավասությունը տարածվեցավ Երուսաղեմի և Կոստանդնուպոլսո զույգ Պատրիարքությանց և անոնց թեմերուն վրա, ու Հայ Եկեղեցվո նվիրապետությունը վերջնականապես իր կերպարանքը գտավ:

Այդ նվիրապետության մեջ Կոստանդնուպոլիսը էջմիածնի հոգևոր հեղինակության ենթակա Աթոռ մը մնաց: Բայց այդ շարգիլեց իրեն, որ երկար դարեր ան ազգային կեդրոն մը մնա հայ ժողովուրդին համար, իր վարչական իրավասություններուն ենթարկե հաճախ օսմանյան կայսրության սահմաններուն մեջ գոյություն ունեցող մյուս Աթոռները՝ Երուսաղեմի Պատրիարքությունն ու Կիլիկիո և Աղթամարի կաթողիկոսությունները, և հայ ժողովուրդի վերջին դարերու պատմության մեջ կատարե բացառիկ դեր մը:

3. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈ ԱԹՈՐՆ ՈՒ ԻՐ ԹԵՄԵՐԸ

Կմտնենք դարձյալ կնճոտ գետին մը: Որոշք էին Պոլսո Պատրիարքության իրավասության սահմանները և ի՞նչ թեմեր գոյություն ունեին հոն:

Հարցումը սակայն իր որոշ պատասխանը կգտնե, եթե նկատի ունենանք, որ այդ սահմանները լայնցան քանի ընդլայնեցավ օսմանյան կայսրությունը ինքը, և որ հայ թեմերը ևս աճեցան այդ սահմաններուն հետ:

Կնճիքը սակայն միշտ կմնա կնճիք, երբ ստիպվինք քննել, թե ի՞նչ կներկայացնեին այդ թեմերը ինքնին, և ի՞նչ էր անոնց կապը Պատրիարքության հետ:

Երբ Ֆաթիհ Պոլսո մեջ Պատրիարքարան կհաստատեր 1461-ին, օսմանյան պետության սահմանները կտարածվեին Փոքր Ասիո մեջ Բրուսայի, Այդընի, Քասթեմունիի, Էնկյուրիի և Սվազի շրջաններուն վրա, իսկ այս շրջաններուն մեջ երեք հայ հոգևոր կեդրոններ կային միայն՝

ա. Սեբաստիան իր Ս. Նշան վանքով,
բ. Էնկյուրիին իր Ս. Աստվածածնի վանքով,
գ. Բրուսան, Կուտիսան և Քարամանը, զորս հավանաբար միակ եպիսկոպոս մը կհովվեր: Ֆաթիհի օրով օսմանյան կայսրության կզվեցան Տրապիզոնը 1461-ին և Ղրիմը 1475-ին, որոնք նույնպես հայ հոգևոր կեդրոններ էին, և որոնք ևս բնականաբար պիտի մտնեին Պոլսո Պատրիարքության հոգևոր իրավասության տակ:

272 «Ազգապատում», Բ, էջ 2156:

Պոլսո հայոց Պատրիարքութեան իրավասութեան շրջանակը ավելի ևս պիտի ընդարձակվեր, երբ սուլթան Սելիմի օրոյ (1512—1520) կայսրութեան սահմաններուն մեջ պիտի մտնէին Կիլիկիան, Սուրիան, Միջագետքը, Բաղեշը, Մալաթիան, Պաղեստինը և Եփրատը, և «այս հաղթութիւններով Կ. Պոլսո Պատրիարքութեան բարոյական հեղինակութիւնը պիտի աճեր հանդիպ Կիլիկիո Կաթողիկոսութեան և Երուսաղէմի Պատրիարքութեան, որոնք իրենց ամբողջութեամբ, իբր նույն ազգութեան մաս, Կ. Պոլսո Պատրիարքութեան մերձաք կնկատվին Յաթիհի հրովարտական դրութեամբ, թեև մինչև այս դրութեան նվիրագործումը երկար ատեն անցած ըլլա»²⁷³։ Նույնը պիտի պատահէր Արևելյան թեմերուն համար ալ, որոնք ի սկզբան էջմիածնի Աթոռին անմիջական իրավասութեան տակ էին, և որոնք հետագային Պոլսո Պատրիարքութեան ենթարկվեցան տակաւ երբ այդ շրջանները օսմանյան տիրապետութեան անցան վերջապես։

ԺՁ դարու ընթացքին Պոլսո Աթոռին իրավասութեան պետք է անցած ըլլան Մուշն ու Տիգրանակերտը իրենց հարակից վիճակներով, իսկ ավելի հետո, նույն դարու վերջին սկսյալ, երբ Զալալիններու արշավանքին և թուրք և պարսիկ բախումներուն պատճառով դերջանցի, երզնկացի, կամախցի, ակնցի և դիվրիկցի գաղթականներ պիտի գային զԵտեղվիլ Մարմարայի գոլգ ափերուն մոտ, հոսոր կեդրոններ պիտի ստեղծվէին Նիկոմիդիո շրջանին մեջ, Արմաշը ունենալով իբրև առաջնորդանիստ, ինչպես և Ռոտոսթոյի և Ադրիանուպոլսո մեջ։

ԺԷ դարու սկիզբը Կոստանդնուպոլսո Աթոռը թատր եղավ ամոթալի վեճերու, որոնք Պոլսո հայ գաղութի պատմութեան մեջ թողուցած են սև և էջ մը։

«Կոստանդնուպոլսո Պատրիարքութեան սկիզբները բոլոր օսմանյան կայսրութեան վիճակները, գոնե մայրաքաղաքն որոշ հեռավորութեամբ շրջանակի մեջ, ուղղակի պատրիարքին վիճակը կնկատվէին, և թեմական իրավունքներ անոր կատարանին, և վաւերութիւն ու քաղաքներու մեջ գտնվող եպիսկոպոսներ ու վարդապետներ թեմակալ չէին, այլ պարզապէս իբր մուրախաւ կամ պատվիրակ կնկատվէին և պատրիարքին իրավունքը կհարգէին։ Առաջին անգամ իսկ Հովհաննէսի, Վանցի Զաքարիայի և Դարանաղեցի Գրիգորի միջև կատարված բախու-

մը, որ ուղղակի իրավունքներու վայելքին համար էր, սկիզբ տվավ առաջնորդական վիճակներու կամ թեմակալութեանց բաժանման, որ պատահական առիթն ծագում առնելով, հաստատուն իրավունքի փոխվեցան»²⁷⁴։ Եվ սակայն որոշապէս շենք գիտեր ոչ թեմերու իսկական թիվը և ոչ ալ անոնց իսկական սահմանները։

Յուցակը²⁷⁵, զոր Ոսկան վարդապետ կազմեց ԺԷ դարու կեսերուն, իբրև պատգիրը Հայ Եկեղեցւո նվիրապետութեան վիճակներուն, առաջին փորձն էր Հայ թեմերու վիճակագրութիւնը կազմելու, բայց այդ փորձը հետո էր թեմերուն իսկական պատկերը տալի, և չէր կոթնէր փաստական տվյալներու վրա։ Օրմանյան սա բացատրութիւնը կուտա Ոսկանի կազմած ցուցակին մասին. «Արևմտյան Եկեղեցւո նվիրապետութեան արքեպիսկոպոսարաններու և եպիսկոպոսարաններու կանոնավոր բաժանման դրութիւնը տեսնելով, և յուր Եկեղեցւոյն պատիվը պահելու նախանձահուցութեամբ, նմանօրինակ ցուցակ մըն ալ կազմած է Ոսկան Հայ Եկեղեցւո նվիրապետութեան համար, թեպետ մենք կկարծենք, թէ իսկականին և իրականին ճիշտ պատկերը պիտի ըլլա յուր ցուցակը։ Հայոց նվիրապետութեան արքեպիսկոպոսական նահանգներու կամ մետրոպոլիտութիւններու և անոնց ենթարկյալ եպիսկոպոսարաններու բաշխված ըլլալը, ոչ միայն կանոնավոր ցուցակներով մեզի հասած չէ, այլև ոմանց կարծիքով Հայ Եկեղեցին այսպիսի դրութիւն ունեցած չէ։ Մենք չունենալուն համակարծիք չենք, ապա թէ ոչ դժվար կըլլար բացատրել նահանգներու անունով կոչված եպիսկոպոսները, զոր օրինակ Սյունյաց, Սոփաց, Աղծնյաց, Մոկաց, Տայոց և այլն, երբ նույն նահանգներուն գաղաւթներն ալ և քաղաքներն ալ հատուկ եպիսկոպոսարաններ ունեցած են։ Ասով մեկտեղ կանոնավոր ցուցակներ չունինք նվիրապետութեան կազմութիւնը քաղելու համար, մանավանդ Ոսկանի ապրած դարուն մեջ, ուր այլևս նահանգներ ու գաղաւթներ ալ քաղաքական նշանակութիւններ չկորուսած էին, և կաթողիկոսներ ըստ հաճույս և ըստ բերման թեմակալներ կամ առաջնորդներ կձեռնադրէին։ Մենք կսիրենք գնահատել Ոսկանի դիտումը, որ ուզած է յուր Եկեղեցին կարգավորյալ ներկայացնել լատին աշխարհին առջև, և իրականը կանոնականի մերձեցնելով ցուցակ մը կազմած է։ Ասով մեկտեղ այդ ցուցակը կարևոր կնկատվի, գոնե ժամանակին տիրող մեծ բաժանումները, և

273 Ա. Ալոյաճեան, «Թուրքիո հայոց Պատրիարքութիւն», «Ընդարձակ օրացույց Ազգային հիմնադրանցի», Կ. Պոլիս, 1908, էջ 292։

274 «Աղգապատում», Բ, էջ 2360։

275 Հ. Ղ. Ալիշան, «Այրարատ», էջ 231։

նույն ատեն գտնվող նվիրապետության պատկերը գիտնալու համար»²⁷⁶։

Արդ, Ոսկանի կազմած ցուցակը Հայ Եկեղեցվո 140-ն ալիլի վիճակները երկու կաթողիկոսությանց վրա կբաժնի, էջմիածնի ենթակա ցուցնելով 17 արքեպիսկոպոսարաններ 105 եպիսկոպոսական թեմերով։ Այդ 17 արքեպիսկոպոսարաններն են Երևան, Բջնի, Հաղբատ, Կարմիր վանք, Ս. Նախավկա, Մակու, Տաթև, Ասպահան, Վան, Աղթամար, Ամիդ, Խարբերդ, Մուշ, Կարին, Սեբաստիա, Կեսարիա և Եվդոկիա։ Միսի Կաթողիկոսության կենթարկե 6 արքեպիսկոպոսարաններ (Կոստանդնուպոլիս, Երուսաղեմ, Բերիա, Թեսալոնիկե, Կիպրոս և Տարսոն) և 6 ալ եպիսկոպոսարաններ (Անարզարա, Ադանա, Մոպսուեստիա, Թիանա, Նեոկեսարիա և Անկյուրիա)։ Ասոնցմե զատ Ոսկան կհիշե 25-ի չափ եպիսկոպոսարաններ, որոնք անձանոթ են կամ դադրած, ինչպես և 5 պատվակալ արքեպիսկոպոսարաններ «լատինացիալ հայք» անվան տակ (Նախիջևան, Կաֆա, Մարաղա, Տփղիս, Սուլթանիե), վերջին 4-ը «ջնջված» ցուց տալով։

Ինչպես կտեսնվի, իրականության անհամապատասխան ցուցակ մըն է Ոսկանի կազմածը, ինչ որ Օրմանյան կվերագրե ժէ դարուն Հայ Եկեղեցվո ներկայացուցած խառնակ վիճակին։

Ժէ դարու վերջերն է միայն, որ Կոստանդնուպոլսո Պատրիարքարանը իր իրավասությունը կտարածե Ամասիա—Մարզվանի, Եղեսիո և Կեսարիո շրջաններուն վրա ալ, իսկ հաջորդ դարուն անոր կենթարկվին Արաբկիրը, Երզնկան, Ակնը, Եվդոկիան, Խարբերդը, Կարսն ու Ախալցխան, առանց հիշելու հոգեվոր այն կեդրոնները, որոնք այս կամ այն վիճակեն անջատված են առանձին կեդրոններ կազմելու համար։

ԺԷ դարեն մնացած հիշատակարան մը, որ Սարգիս դպիր Հովհաննեսյանի ձեռագիր «Տեղագրութիւն»-ն է և որ «հնագույն վավերագիրն է»⁴։ Պոլսո Պատրիարքության թեմագրության վրա խոսողը, հետևյալ 20 առաջնորդությունները կթվի. էդրենե, Թեքիրդաղ, էնկյուրյու, Ղայսերի, Ամասիա, Բրուսա, Թոքատ, Մըվադ, էկին, Շաբին-Գարահիսար, Թոմարդա, Տրապիզոն, էրզնկյան, Դիարբեքիր, Ուրֆա, էրզրում, Ղարս, Ախալցխա, Ուռումեկու մուխաթայն (Ղրիմ, Բեսարաբիա և այլն), Արամշու մուխաթայն (Նիկոմիդիա և այլն)²⁷⁷։

Պետք է գալ մինչև Սիմեոն Երևանցի կաթողիկոսը՝ թեմերու դասավորման հանդիպելու համար։ Արդարեւ, Սիմեոն կաթողիկոսն է, որ առաջին անգամ իր «Ջամբո»-ին մեջ²⁷⁸ Հայ Եկեղեցվո առաջնորդական վիճակները նվիրակությանց կբաժնի, որոնցմե 4-ը պարսկահայ նվիրակություններ են (Սպահան, Դավրեժ, Նախիջևան և Երևան), 6-ը ուղղակի էջմիածնի ենթակա տերունի թեմեր են (Ջմյուռնիա, Բաղդադ-Բասրայի վիճակը, Գիլանի երկիրը, Տփղիս բովանդակ Վրաստանի հետ, Հաշտարխան և էջմիածնի հատուկ տերունի գյուղերը), իսկ 10 նվիրակություններ ալ տաճկահայ վիճակները կներկայացնեն (Կ. Պոլիս, Ադրիանուպոլիս, Ղրիմ, որուն հետ են Բեսարաբիան, Վալաքիան, Մոլդովան և Բուլղարիան, Եվդոկիա, Անկյուրիա, Կարին, Կարս, Խաչազեդ, Վան և Դիարբեքիր)։

Եվ սակայն Սիմեոն կաթողիկոսի կատարած այս դասավորումն ալ դատապարտված էր թուղթի վրա մնալու։ Դեպքերը թույլ չէին, որպեսզի Մայր Աթոռը իր հեղինակությունը կիրարկե, այնպես որ թեմերու բաժանումը շարունակեց միշտ խառնակ մնալ։

Պոլսո Պատրիարքարանին մեջ 1834 թվականով արձանագրություն մը հետևյալ 36 վիճակները մաս կնկատե Թուրքիո հայոց Պատրիարքության. Ադրիանուպոլիս, Ռոդոստո, Նիկոմիդիա, Վառնա—Շումնու, Բրուսա, Իզմիր, Բանդրմա, Կուտինա, Մարզվան—Ամասիա, Եվդոկիա, Թամզարա, Գաղատիա, Կեսարիա, Սեբաստիա, Չնքուշ և Ատիշ, Շաբին—Գարահիսար, Երզնկա, Ակն, Արաբկիր, Եղեսիա, Չարշամբա, Տրապիզոն, Կարին, Արդն, Բաբերդ, Բալու, Դադեմ (Խարբերդ), Վան, Ածալտներ, Մուշ, Բուլանքի, Խնուս, Գյուլսու, Մատնալանից թեմ, Ս. Դանիել Կեսարիո²⁷⁹։

Պոլսո հայ Պատրիարքության կապված թեմերուն ճշգրիտ պատկերը գտնելու համար պետք է Աղգային Սահմանագրության օրենքուն գալ։

Աղգային Սահմանագրությունը Թուրքիո պատրիարքության ենթակա հետևյալ 50 առաջնորդական վիճակները կնախատեսե. Երուսաղեմ, Եվդոկիա, Բերիա, Կիպրոս—Տարսոն—Սիս, Մարաշ, Հաջըն, Ջեթուն, Ադանա, Եղեսիա, Տիգրանակերտ, Քոդըստան, Բաղդադ, Բաղեշ, Վան, Աղթամուր, Կարս, Մուշ, Երզնկա, Բաբերդ, Կարին, Խարբերդ, Արաբկիր, Բալու, Կեղի, Ակն, Դիվրիկ,

²⁷⁶ Սիմեոն կաթողիկոս Երևանցի, «Ջամբո, գիրք, 7րդ հիշի յիշատակարան արձանացուցիչ», Վաղարշապատ, 1873։

²⁷⁹ Ա. Ալպոյաճյան, հիշված աշխատությունը, էջ 295—297։

²⁷⁶ «Աղգապատում», Բ, էջ 2546։

²⁷⁷ Ա. Ալպոյաճյան, հիշված աշխատությունը, էջ 294—295։

Մալաթիա, Կյուրին, Անթեբ, Քիլիս, Շաբին-Գարահիսար, Սեբաստիա, Եվդոկիա, Մարգվան, Ամասիա, Տրապիզոն, Զանիկ, Յոզղատ, Կեսարիա, Գաղատիա, Կուտինա, Զմուռնիա, Բրուսա, Բանդրմա, Նիկոմիդիա, Ռոդոստո, Ադրիանուպոլիս, Վալաբիա, Մուղոլա, Վառնա²⁸⁰։

Համիդի օրերուն հետևյալ 45 թեմերը կային Պոլսո Պատրիարքության իրավասության տակ. Կոստանդնուպոլիս, Ադրիանուպոլիս, Ռոդոստո, Նիկոմիդիա—Արմաշ, Բրուսա, Բանդրմա—Բալքեսիր, Քյոթահիա—Աֆիոն—Գարահիսար, Գաղատիա, Զմյուռնիա, Դոնիա, Քաստեմունի, Կեսարիա, Սեբաստիա, Եվդոկիա, Ամասիա—Մարգվան, Զանիկ, Տրապիզոն, Կարին, Դերջան, Բասեն, Քղի, Բաբերդ, Երզնկա—Կամախ, Բայազիդ, Վան, Լիմ—Կաուց, Հեքքյարի, Բաղեշ, Մուշ, Սղերդ, Տիգրանակերտ, Բալու, Արղի—Զնքուշ, Խարբերդ, Զմշկաձագ, Զարսանջաք, Ակն, Արաբկիր, Եդեսիա, Բաշլագ, Եգիպտոս, Բուղարիա, Ռումանիա, առանց հիշելու չորս հոգևոր հովվությունները (Սելանիկ, Կրետե, Աթենք և Ափրիկյան Տրիպոլիս)։

Սույն շրջանին Կիլիկիո Կաթողիկոսությունը ուներ տասներեք թեմեր, որոնք էին. Սիս, Ադանա—Բերեքեթ, Հաջըն, Հալիպ—Իսկենդերուն—Քիլիս, Այնթաբ, Անթաքիա, Մարաշ, Զեյթուն, Մալաթիա, Յոզղատ, Կյուրին—Մանչըլիք, Դիվրիկ և Դարենդե²⁸¹։

Հայ եկեղեցվո թեմերուն ամբողջական պատկերը, զոր Օրմանյան կուտա «Հայոց եկեղեցի»-ին մեջ²⁸², Պոլսո Պատրիարքության ենթակա հետևյալ առաջնորդական վիճակները կնշանակեն.

1 պատրիարքական վիճակ (Կ. Պոլիս)։

14 արքեպիսկոպոսական վիճակներ (Նիկոմիդիա, Բրուսա, Զմյուռնիա, Գաղատիա, Կեսարիա, Սեբաստիա, Կարին, Վան, Տարոն, Տիգրանակերտ, Խարբերդ, Եգիպտոս, Բուղարիա, Ռումանիա)։

27 եպիսկոպոսական վիճակներ (Ադրիանուպոլիս, Ռոդոստո, Բիլեջիկ, Բանդրմա, Կուտինա, Քաստեմունի, Իկոնիոն, Եվդոկիա, Ամասիա, Շաբին-Գարահիսար, Սամսոն, Տրապիզոն, Երզնկա, Բաբերդ, Բասեն, Դերջան, Քղի, Բայազիդ, Բաղեշ, Սղերդ, Բալու, Ակն, Արաբկիր, Զմշկաձագ, Զարսանջաք, Եդեսիա, Բաղդադ)։

7 վանական թեմեր (Արմաշ, Լիմ—Կաուց, Աղբակ, Զնքուշ, Կիպրոս, Արղնի, Կամախ)։

280 Ա. Պեղեգեյան, հիշված աշխատությունը, էջ 425—426։

281 Ա. Ալպոլադյան, հիշված աշխատությունը, էջ 259—332։

282 «Հայոց եկեղեցին», էջ 259—265։

2 տեսչական թեմեր (Սելանիկ, Հունաստան)։

Օրմանյան 15 առաջնորդական վիճակներ ենթակա ցույց կուտա Կիլիկիո Կաթողիկոսությունը։

1 Կաթողիկոսական վիճակ (Սիս)։

2 արքեպիսկոպոսական վիճակներ (Ադանա և Մարաշ)։

10 եպիսկոպոսական վիճակներ (Հաջըն, Փայաս, Բերիա, Զեյթուն, Այնթաբ, Անտիոք, Մալաթիա, Յոզղատ, Կյուրին, Դիվրիկ)։

2 վանական թեմեր (Յունուզ և Դարենդե)։ Իսկ Աղթամարի Կաթողիկոսությունը, որ վաղուց անվանական դարձած էր արղեն, երկու վիճակ միայն ուներ ըստ Օրմանյանի ցուցակին։

1 Կաթողիկոսական վիճակ (Աղթամար)։

1 եպիսկոպոսական վիճակ (Խիզան)։

Ավելորդ է ըսել, որ մեծ սպանդան հետո, որ բնաջնջեց Թուրքիո հայությունը և ողջ մնացողները ցրվեց աշխարհի չորս հովիտում, ոչ հոտ մնաց և ոչ հովիվ Թուրքիո գավառներում մեջ։ Քանի մը փոքր համայնքներ միայն կմնան երբեմնի շեն հայ թեմերուն տեղ։ Անոնք հետևյալներն են. Գայսերի, Դիարբեքիր, Իսկենդերուն, Դերիք և Հաթայ²⁸³։

4. ՀԱՅ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ ԻՐԵՆՑ ԹԵՄԻՆ ՄԵՋ

Օսմանյան տիրապետության տակ պետական կառույցին մաս կկազմեին գավառի հայոց առաջնորդներն ալ և հետևաբար անոնց պաշտոնները ևս կնվիրագործվեին կայսերական «բերաթ»-ով։

Գավառի հայոց առաջնորդները ևս իրենց որոշ առանձնաշնորհումներն ունեին, զորս կհիշատակեիր իրենց անվանման «բերաթ»-ը։ Մեր ճեղքին տակ ունինք 1254 ռեջբ 3 (1838 թ. հոկտեմբեր 10/22) թվակիր «բերաթ» մը, որ իբրև Բալուի առաջնորդ կվավերացնե Գևորգ եպիսկոպոս Օղեմիշցին, հետագային առաջնորդ ուումեն իշխանապետությանց մեջ, Սույն «բերաթ»-ը²⁸⁴ կըսե, թե Պոլսո և ենթակա շրջաններու (թեվարի) հայոց պատրիարք Ստեփանոս դիմում կատարած է Բարձրագույն դուռ որպես Բալուի և շրջականներու հանգուցյալ առաջնորդ Պետրոսի տեղ, որ ժամանակին առաջնորդ ընտրված էր 600 ստակ (աֆշ) նվեր (ֆեշֆեշ) տալով և համապատասխան «բերաթ» ստանալով, առաջնորդ կարգված է Գևորգ, և կխնդրեր, որ հիշյալ նվերը հնչուն կերպով պետական գանձին հանձնվելու պայմանով, «բերաթ» շնորհ-

283 Առանձնագրություն պատգամավորական ժողովի (11 հոկտեմբեր 1961). պաշտոնական հրատարակություն Աղգային Պատրիարքարանի, 1961, էջ 4։

284 Արխիվ ուսմանահայ թեմի, թիվ 44։

վի անոր: Արդ ստուգված ըլլալ վ, կըսե «բերաթ»-ը, որ Բալուի առաջնորդները նույնքան փնշեցէ կվճարեին և որ Գեորգն ալ այդ գումարը ամբողջութեամբ հանձնած է պետական գանձին, կշնորհվի անոր խնդրված «բերաթ»-ը և կհրամայվի, որ Բալուի և շրջականերու մեջ գտնվող հայերը, մեծ ու պզտիկ, զայն առաջնորդ (մերխասա) ճանչնան, իրենց ծեսին վերաբերալ խնդիրներու մեջ անոր խոսքեն դուրս չելնեն, որով ընդդիմութիւն կամ միջամտութիւն տեղի չունենա երբ ան առաջնորդութեան ենթակա վայրերուն մեջ քահանա նշանակե կամ պաշտօնակ ընե տեղը անվանելով ուրիշը, առանց անոր գիտութեան և արտոնութեան գլուղերու քահանաները որով պակ չկատարեն հակառակ իրենց ծեսին, առաջնորդն կամ իր փոխանորդն զատ որով մեկը չմիջամտե եթե կին մը իր ամուսինը թողու հեռանա կամ այր մը ձգե իր կինը, բնթալմալը կամ քասալմը և կամ ուրիշներ չկարենան միջամտել եթե նույն առաջնորդը անժառանգ մեռնող քահանաներուն կամ մայրապետներուն գլուղը առնե պատրիարքին կողմն պետական գանձին հանձնվելու համար, ընդունելի նկատվի եթե մեռնող քահանաները կամ մայրապետները և կամ որով հայ ըստ իրենց ծեսին որով կտակ ընե աղքատներուն, պատրիարքին կամ առաջնորդին, հիշալ առաջնորդը կարենա արգիլել և պատժել որով հայ քահանա, որ առանց եկեղեցի կամ վանք ունենալու, տեղե տեղ ման կուգա և խոտովութիւն կգրգռե, հիշալ Գեորգը ևս կարենա տիրանալ այն բոլոր պարտեղներուն, այգիներուն, ագարակներուն, ջաղացներուն, յաղմաններուն, արտերուն, վանքերուն և նման գլուղներուն և զվարներուն, որոնք եկեղեցիներուն վաքըք եղած են, ճիշտ այնպէս, ինչպէս տեղ եղած են իր նախորդները, և ինչպէս որ կտնօրինե պատրիարքը իր կնքալ գրութեամբ:

Իրավունքները, որոնք կնախատեսվին սուլն «բերաթ»-ին մեջ, համապատասխանաբար հարազատ կրկնութիւնն են այն իրավասութեանց, զորս նախկին սովթանները տված են գալառի հայոց հին առաջնորդներուն, և միեկնույն ատեն շատ չեն տարբերի անոնցմէ, որոնք կտրվին պատրիարքներուն:

Իսկ թե որքա՞ն ի վիճակի էին գալառներու հայ առաջնորդները կիրարկելու սովթանական «բերաթ»-ով շնորհված այս իրավասութիւնները, միամտութիւն պիտի ըլլար կարծել, որ այդ իրավասութիւնները կկիրարկվին իրապես, օսմանյան կայսրութեան այն օրերուն պայմաններուն մեջ, երբ գալառները կգտնվեին սեփական բռնապետներու տիրապետութեան տակ, որոնց չէր հասներ երբեմն կեդրոնի ուժը:

Սիմեոն Լեհացի գալառի հայաշատ կեդրոններուն մեջ կատարած իր ուղևորութեան առթիւ կգրե, թե «այնպէս չար էին եանշարիքն, որ քրիստոնէից չի տային ձի հեծնալ, ոչ ջորի, ոչ լաւ լուխալ ագանել, ոչ այգի, ոչ տուն մեծ, այլ զամենայն հափշտակէին ի ձեռաց: Նաև առաջնորդաց շտային քննել հաս-չհաս կամ օրէնք պահել. զի թէ որ կամէր կին առնուլ և չհասութք լինէր, չերթային առ հովիւ կամ առաջնորդ, այլ [երթային առ] ենշարի մի և տային կաշառ, և նա գայր իրիցուն թօփուղով պակ տայր առնել. և նա կամայ պիտէր խօսիցն չինէր. ապա թէ ոչ բաղում չարիս անցուցանէր ի գլուխն և վնաս և տուգանք ձգէր զնոսա. այլ և եկեղեցեաց և վաճօրէից: Եւ թուրքաց աշխարհն ամենայն այդպէս են, ապա նարբերդ առաւել քան զամենայն»²⁸⁵:

Առաջնորդները տվալ գալառին մեջ հոգևոր հեղինակութիւն մըն էին իրենք ալ, սահմանափակ չափով մը վայելելով այն միեկնույն իրավունքները, զորս պատրիարքը կվայելէ Պոլսո և իր հոգևոր իրավասութեան ենթակա սահմաններուն մեջ: Եվ դժվար չէ եզրակացնել, թե այն միեկնույն կապերը, զորս պատրիարքը Պոլսո մեջ ուներ Բարձրագույն դռն հետ, առաջնորդներն ալ գալառի փաշաներուն հետ ունեին, մեջն ըլլալով նաև նյութական պարտականութիւնները, զորս ուներ ուսա հոտի մը պետը գեպի իր տերը:

Առաջնորդներու պարտականութիւններն մեկն ալ պատրիարքին հատկացված եկամուտներու հավաքումն էր: Անոնք պարտական էին գանձել և Պոլիս հասցնել մուֆաթաւն, զոր պատրիարքները ստիպված էին հատուցանել Բարձրագույն դռն:

Առաջնորդական թեմերը միեկնույն կարևորութիւնը չէին ներկայացնել սակայն բոլորն ալ և հետեաբար միեկնույն ազդեցութիւնը չունին բոլոր առաջնորդները: Այդ ազդեցութիւնը կախում ուներ թեմին ընդարձակութենէն, հասութիւններու առատութենէն և տվալ շրջանի փաշային իր իսկ վայելած հեղինակութենէն:

Առաջնորդներու շնորհված հին «բերաթ»-ներ հաղվադեպորեն հասած են մեզ: Տարակույս չկա, որ անոնք միեկնույն բովանդակութիւնն ունեին ինչ կվերաբերի առաջնորդներու նյութական պարտականութեանց օսմանյան կառավարութեան հանդեպ և անոնց վայելած իրավունքներուն իրենց թեմին սահմաններուն մեջ: Պատրիարքներուն տրված «բերաթ»-ներուն պես շատ քիչ փոփոխութիւններ կրած են անոնք ևս դարերու ընթացքին:

²⁸⁵ Սիմեոն Լեհացի, «Ուղևորութիւն», էջ 193:

Մեր ձեռքին տակ ունինք պատճենը «բերաթ»-ի²⁸⁶ մը, զոր սուլթան Մահմուդ Բ 1838 սեպտեմբեր 22-ին (1254 ռեջեբ 3) շնորհած է Գևորգ եպիսկոպոս Օղեմիշցիի՝ այս վերջինին Բալուի առաջնորդ անվանման առթիվ: «Բերաթ»-ը կհիշատակե նախ, որ Պոլիս և իր ենթակա շրջաններու հայոց պատրիարք Ստեփանոս Աղավնի հաղորդած է հոտն կայսերական գահոյից, որպեսզի հանգուցյալ Պետրոս հոգևորականին տեղ, որ 600 աֆչե փեշ-ֆլշի փոխարեն կվարեր Պոլսո Պատրիարքութեան ենթակա թեմերեն Բալուի և իր շրջականներու առաջնորդութունը, առաջնորդ կարգված է Գևորգ անուն հոգևորականը՝ 600 աֆչե փեշֆեշը կանխիկ վճարելու պայմանով և խնդրած է «բերաթ»-ի մը շնորհումը հիշյալի անվան: «Բերաթ»-ը կավելցնե հետո, թե դիվանական արձանագրութիւններեն հաստատված ըլլալով հանգուցյալ Պետրոս հոգևորականին պարագան և ստուգված ըլլալով, որ հիշյալ Գևորգը արքունական գանձին հանձնած է ամբողջութեամբ 600 աֆչեի այդ գումարը, կշնորհվի անոր անվան խնդրված «բերաթ»-ը, և հետևաբար կհրամայվի, որ հիշյալ Գևորգը իր նախորդներուն պես վարե Բալուի և շրջականներու հայոց առաջնորդութիւնը. իր առաջնորդութեան ենթակա վայրերուն մեջ գտնվող հայերը, մեծ ու պոտիկ, զայն իբրև իրենց առաջնորդ ճանշման և իրենց ծեսին վերաբերյալ խնդիրներու մեջ դուրս չելլեն անոր խոսքեն. որն է միջամտութիւնը ըլլա-եթե հիշյալ հոգևորականը հրաժարեցման արժանի քահանաները իրենց պաշտոնեն զրկե և փոխարինե ուրիշներով, առանց հիշյալ հոգևորականին գիտութեան ու կամքին, գլուղական քահանաները չհամար-

ձակին որն է պսակ կատարել. պսակյալներու բաժանման վերաբերյալ գործերուն մեջ իրմե և իր փոխանորդներեն զատ որն է մեկը չկարենա միջամտել. անժառանգ մեռնող վարդապետներուն, քահանաներուն և մայրապետներուն թողունը հիշյալ առաջնորդը առնե՝ պատրիարքին կողմն արքունի գանձին հանձնելու համար, և այդ բանին բնթ-ու-մայն ու քասսամը չկարենան միջամտել. ընդունելի ըլլա կտակը, զոր մեռնող վարդապետներն ու մայրապետները կընեն իրենց եկեղեցվո աղքատներուն, պատրիարքին և առաջնորդին. առաջնորդը իրավունք ունենա պատժելու և արգիլելու այն հայ հոգևորականները, որոնք որն է վանքի և եկեղեցիի շեն պատկանի իր և սակայն կթափառին վայրե վայր գրգռութեանց տեղի տալով. հիշյալ առաջնորդը կարենա տեր ըլլալ, իր նախորդներուն տեր եղած ձևով, իրենց եկեղեցվույն պատկանող այգիներուն, պարտեզներուն, ագարակներուն, ջաղացքներուն, այգամաներուն, արտերուն և վանքերուն, ինչպես նաև եկեղեցիներուն վաճիք եղած գույքներուն և հոտերուն, ինչպես որ խնդրված է պատրիարքին կողմն մատուցված գրութեան մեջ, և այս առթիվ միջամտելու իրավունք չունենա որն է մեկը:

Գևորգ եպիսկոպոս Օղեմիշցիի տրված այս «բերաթ»-ին մեջ մատնանշված իրավունքները տարակույս չկա, թե վայելած են նախորդ դարերու հայ առաջնորդները ևս զավանդուն մեջ, տեր դառնալով հեղինակութեան մը, որ եթե իր հետ բերած է պատասխանատվութիւններ և հոգեր ալ, խաչ մը եղած է շատ հոգևորականներու համար՝ թեմի մը տիրաւալու, և հաճախ սանդուղք դարձնելու համար զայն իրենց:

286 Ռումանհայ թեմական արխիվ, թիվ 44:

(Ծառեակի)